# ՆԱ ԶՈՀՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

*Հայաստանի եւ Արցախի պաշտպանության ու անկախության համար մղված պայքարի առաջին ազատամարտիկներից էր մեր անվեհեր մարտական ընկերը՝ ՀՀ Ազգային հերոս* ***Ջիվան Աբրահամյանը:***

րցախյան նորօրյա գոյա-
մարտում սխրանքներով լի
շատ էջեր գրեց խորհրդա-
բանակի պահեստի «կապի-
, կամավորների վաշտա-
, Հատուկ գնդի գումարտակի
մանատար Ջիվան Աբրահա-
ը, որն ազատամարտի առա-
օրերից ճանաչված էր Արցա-
պայքարին զինվորագրված
վորականների շրջանում:
Աֆղանական պատերազմի
ակից էր, եւ խորհրդային բա-
ծուղակն ընկած գումարտա-
ջնամու շրջապատումից կը-
դուրս բերելու համար հրամա-
րության կողմից պարգեւ-
րվել էր «Արիության համար»
ալով: Նրան շնորհվել էր նաեւ
եր լեյտենանտի կոչում:
յած ես Կոտայքի կամավո-
ան ջոկատի կազմում էի գոր-
, սակայն 1991թ. գարնանից
րմացա Չարբախի կամավո-
ան, հետագայում Հատուկ
տղաների եւ հատկապես՝
անի եւ նրա վաշտի ազատա-
տիկների հետ:
րիլի 30-ին, Գետաշենի հերո-
ան դիմադրության եւ անհա-
ար կռվում հանձնելու լուրը ցն-
բոլորիս եւ անհամբեր սպա-
էինք մեկնելու հրամանի: Ըն-
ր անց մարտական ջոկատ-
նետվեցին սահմանամերձ
ններ՝ Տավուշ, Իջեւան ու Նո-
րյան:
յիսի 1-7-ը մեր ջոկատը գոր-
էր Ջիվան Աբրահամյանի եւ
անավոր փոխգնդապետ
րիկ Բաղդասարյանի հրա-
մատարությամբ: Այդ օրերի
րերն ու իրադարձությունները
են, սակայն ես ցանկանում
կարագրել որոշ մասը դրանց,
կրատկերի Ջիվան Աբրահա-
ի խիզախ ու հերոսական գոր-
երը, որի ականատեսն եմ
մասնակցելով Տավուշի
պտպանական մարտական
ծողություններին: Օգտվելով
հրդային բանակի զորամաս-
ացահայտ կողմնակալ աջակ-
ունից, ազերի օմոնականներն
նյալ ջոկատները լուրջ սպառ-
ում էին Տավուշի սահմանա-
Ներքին Կարմիրաղբյուր,
լիս, Պառավաքար եւ մյուս
րի բնակչությանը: Ուստի
խնդիրն էր՝ կասեցնել նրանց
ջխաղացումը, իսկ անհրա-
ության դեպքում պատաս-
կրակ բացել հակառակորդի
: Մայիսի 2-ին եւ 3-ին Պա-
քարի սահմանագծում դիր-
րված, մենք անզեն աչքով



տեսնում էինք, թե ինչպես դիմացի բարձունքում գտնվող ադրբեջանական Ղշլաղ գյուղում ու նրա շրջակայքում բազավորվում էին համատեղ խորհրդային բանակի զորամասերն ու ազերի զինյալ ջոկատները: Չնայած հակառակորդի գերակշիռ կուտակումներին ու գերազանց սպառազինությանը, 64-ամյա փոխգնդապետ Դ. Բաղդասարյանը մայիսի 4-ի լույս գիշերը հանձնարարություններ ու հրամաններ տալով բոլորիս, հայտնեց նաեւ, որ բաց տարածքից մեկ հրետանային հաշվարկից առավոտյան ժամը 5:00-ին կրակ է բացելու հակառակորդի կուտակումների վրա: Ջիվանը ուներ իր զաղտնի եւ հատուկ հանձնարարականը:

Ղարաբաղցի Ջանոյին, իր վաշտի 7 մարտիկներին եւ ինձ հրամայված էր պաշտպանել հրետանին աջ թեւից եւ անհրաժեշտության դեպքում դիմահար կրակով ոչնչացնել ազերի օմոնականներին, եթե նրանք այդ թեւից փորձեին գրոհել մեր հրետանու վրա:

Հիշում եմ, որ մեր ստորաբաժանումը՝ 80-90 մարտիկներ, շատ վատ էին զինված, ընդամենը 17 միավոր ավտոմատ հրացաններով էինք՝ «Կալաշնիկով» մակնիշի, իսկ մնացածները՝ որսորդական եւ այլ մակնիշի: Անձամբ Ջիվանը ինձ էր հանձնել 1 ավտոմատ, 4 պահունակ փամփուշտ եւ 2 նռնակ: Գիշերային խավարում, հրանոթը խաղողի այգիների միջով եւ ճահճոտ տեղանքով հրելով, մի կերպ մոտեցրինք Ղշլաղ գյուղից 4-5 կմ հեռավորության վրա եւ առանց քողարկման կանգնեցրինք բաց դաշտում: Հարմար դիրքեր գրավելով հաստաբուն ընկուզենիների տակ, սպասում էինք ազդանշանին՝ հրանոթի առաջին կրակոցին: Վերջապես ժամը 5:30-ի սահմաններում մեր հրանոթը կրակ բացեց հակառակորդի վրա: Կիսախավարում մեզ հասկանալի չէր, թե ինչ էր կատարվում հակառակորդի կողմում: Ժամը 6:00-ի սահմաններում Ղշլաղ գյուղի մատույցներում նկատեցի, որ սեւ կետերի խումբը փոքրիկ շղթաներով առաջանում է, իսկ աջ թեւից գնացող միայնակ սեւ կետից հանկարծ բոցի լեզուներ շորտվեցին: Ինձ հասկանալի էր. Ջիվանը գնում էր իր վաշտից առանձնացված 20 քաջերով, նրանց տանելով գրոհի, որը այդ ժամին հակառակորդի համար անսպասելի էր: Եվ առաջինը Ջիվանը վաշտային գնդացրից կրակ բացեց, որի լուսածիրային կրակահերթերը տարածվում էին դիմացը, կարծես կարմիր մկներ էին վազում կիսախավարում:

Ժամը 6:30-ի սահմաններում լուսացավ եւ ամեն ինչ տեսանելի էր մարտադաշտում: Հակառակորդը առաջինը հզոր կրակով լռեցրեց մեր հրետանու հաշվարկը՝ տանկից եւ մարտական ուղղաթիռից կրակ բացեց նրա վրա, իսկ փոխգնդապետ Դ. Բաղդասարյանն ու նրա օգնական ՀԱԲ-ի Սուրոն հրաշքով ողջ մնացին՝ թաքնվելով մոտակա թփուտներում: Ահավոր տեսարան բացվեց նաեւ մեզ համար: Ժամը 7-ին պարզ տեսնում էինք քողարկված մարտական տեխնիկան՝ տեղավորված Ղշլաղ գյուղում եւ նրա շրջակայքում:

Մեր ուղղությամբ անկանոն կրակ բացեցին հետեւակի մարտական մեքենաներից (ԲՄՊ), որոնց հրանոթների արկերն ու խոշոր տրամաչափի հաստոցային գնդացիրները անխնա կոտրատում էին ընկուզի ու կեռասի ծառերի բարձր ճյուղերը, որոնք փշրվելով, արկերի բեկորների հետ թափվում էին մեր կողքին: Թվում էր, թե այլեւս ելք չկա, եւ մենք չենք կարող դուրս պրծնել հակառակորդի կրակային ծուղակից: Սակայն այստեղ էլ փայլեց Ջիվան Աբրահամյանի գրագետ տակտիկական հնարամտությունը, որը եւ փրկեց մեզ: Նա իր վաշտի 17-19 խիզախների հետ, հակառակորդից աննկատ, մագլցել էր բարձունքը եւ բարձրանալով ջրամբարի նակատային պարսպի վրա՝ հակառակորդից խլել այն տիրապետելու նախաձեռնությունը եւ սկսել սպառնալ հակառակորդին, թե կպայթեցնեն ջրամբարը: Հակառակորդին հասկանալի էր, թե պայթեցման դեպքում որքան ադրբեջանական բնակավայրեր ջրասույզ կլինեին: Ուստի հակառակորդը սկսեց բանակցել զենքի ուժով՝ խփում էր նախազգուշական ձեւով, կասեցնող կրակով, որ՝ ետ գնացեք, չառաջանաք...

Հակառակորդի 8-10 տանկեր եւ հետեւակի մարտական մեքենաներ անգործության մատնվեցին եւ կանաչ վիշապների պես քողարկված, կանգնած մնացին խաղողի այգիների մեջ:

Օգտվելով հարմար պահից, ժամը 8:30-9:00-ին, թռչող արկերի սուլոցների ներքո, մենք բարձրացանք Պառավաքարի մոտակա բարձունքը, ուր տանկերը այլեւս չէին կարող բարձրանալ:

Նրանց սխրանքն առայսօր ապրում է մարտին մասնակից ազատամարտիկների հիշողության մեջ:

Ջիվան Աբրահամյանի հերոսական ու փառապանծ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հարազատների ու մարտական ընկերների սրտերում:

**ԲԱԲԿԵՆ ԲԱԲԱՅԱՆ**
*ՀԲ փոխգնդապետ, ազատամարտիկ*